



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

«26» մարտի 2018թ.

N18

ք. Ստեփանակերտ

Դատախազի և քննիչի ատեստավորում անցկացնելու հարցաշարը հաստատելու մասին

Ի կատարումն Արցախի Հանրապետության գլխավոր դատախազի 26.03.2018թ. թիվ 17 հրամանի՝ Դատախազի և քննիչի ատեստավորում անցկացնելու կարգի 27 -րդ կետի, հիմք ընդունելով «Դատախազության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10 -րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 28-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Արցախի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 72–րդ և 73–րդ հոդվածները, ինչպես նաև դատախազների և քննիչների ատեստավորում անցկացնելու հարցաշարի հստակեցման անհրաժեշտությունը

Հ ր ա մ ա յ ու մ եմ՝

1. Հաստատել դատախազի և քննիչի ատեստավորում անցկացնելու հարցաշարը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության գլխավոր դատախազի «Դատախազի և քննիչի ատեստավորում անցկացնելու հարցաշարը հաստատելու մասին» 2015թ. թվականի մարտի 23-ի թիվ 35 հրամանը:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել Արցախի Հանրապետության գլխավոր դատախազի՝ Արցախի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի աշխատանքները համակարգող տեղակալի վրա:

4. Հրամանն ուղարկել Արցախի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, ԱՀ Գլխավոր դատախազության ավագ դատախազին և դատախազին, գլխավոր դատախազության բաժինների պետերին, քաղաքապետախազներին:

5. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական

Ա.Մոսիյան

Հավելված

Արցախի Հանրապետության գլխավոր
դատախազի 2018 թվականի մարտի
26-ի թիվ 18 հրամանի

Ծանոթություն

Մույն հարցաշարում ընդգրկված հարցերի լիարժեք պատասխանները պետք է ներառեն դրանց օրենսդրական կարգավորումները, Քերագույն դատարանի, ԱՀ դատախազության կոլեգիայի որոշումներով և ԱՀ գլխավոր դատախազի հրամաններով սահմանված կանոններն ու դիրքորոշումները:

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

ԴԱՏԱԽԱԶԻ ԵՎ ՔՆՆԻՉԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

Արցախի Հանրապետության Սահմանադրություն

- 1) Արցախի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքները.
- 2) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները.
- 3) ԱՀ նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակը.
- 4) ԱՀ Ազգային ժողովը.
- 5) ԱՀ Կառավարությունը.

«Դատախազության մասին» Արցախի Հանրապետության օրենք

- 6)) Արցախի Հանրապետության դատախազության գործունեության սկզբունքները.
- 7) Արցախի Հանրապետության դատախազության համակարգը.
- 8) Քրեական հետապնդում հարուցելը.
- 9) Հսկողությունը մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.
- 10) Մեղադրանքի պաշտպանությունը դատարանում.
- 11) Դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկումը.
- 12) Հսկողությունը պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման

օրինականության նկատմամբ.

- 13) Պետական շահերի պաշտպանությունը.
- 14) Դատախազական ակտերը.
- 15) Դատախազի և քննիչի իրավունքներն ու պարտականությունները.
- 16) Դատախազի և քննիչի խրախուսումն ու կարգապահական պատասխանատվությունը:

Արցախի Հանրապետության քրեական օրենսգիրք

- 17) Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում և տարածության մեջ.
- 18) Հանցագործության տեսակները. շարունակվող և տևող հանցագործությունները.
- 19) Անմեղսունակություն և սահմանափակ մեղսունակություն..
- 20) Առանց մեղքի վնաս պատճառելը.
- 21) Հանցագործությունների համակցությունը.
- 22) Հանցագործությունների ռեցիդիվը.
- 23) Ավարտված և չավարտված հանցագործությունները.
- 24) Հանցագործությունից կամովին հրաժարումը.
- 25) Հանցակիցների տեսակները.
- 26) Հանցակիցների պատասխանատվությունը, հանցակցի սահմանազանցումը.
- 27) Հանցանքը մի խումբ անձանց, կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կողմից կատարելը.
- 28) Անհրաժեշտ պաշտպանությունը՝ որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք.
- 29) Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք.
- 30) Ծայրահեղ անհրաժեշտությունը՝ որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք.
- 31) Ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք.
- 32) Հրաման կամ կարգադրություն կատարելը որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք.
- 33) Պատժի հասկացությունը և նպատակները.
- 34) Պատժի տեսակները, հիմնական և լրացուցիչ պատիժները.
- 35) Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները.
- 36) Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները.
- 37) Պատիժ նշանակելը հանցանքների և դատավճիռների համակցությամբ.
- 38) Հանցակիցների պատասխանատվությունը.
- 39) Քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու հիմքերը.
- 40) Պատիժը պայմանականորեն չլիքառելը և օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը.
- 41) Համաներման և ներման բնութագիրը.
- 42) Դատվածության բնութագիրը.
- 43) Անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի

առանձնահատկությունները.

44) Սպանության հասկացությունը,

45) Ինքնասպանության հասցնելու և ինքնասպանության հակելու քրեաիրավական բնութագիրը.

46) Դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու քրեաիրավական բնութագիրը.

47) Մարդուն առևանգելու և ազատությունից ապօրինի զրկելու քրեաիրավական բնութագիրը.

48) Բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների քրեաիրավական բնութագիրը.

49) Ավագակության հարձակման քրեաիրավական բնութագիրը.

50) Գողության և կողոպուտի քրեաիրավական բնութագիրը.

51) Խարդախության և խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով զույքային վնաս պատճառելու քրեաիրավական բնութագիրը.

52) Յուրացնելու կամ վատնելու քրեաիրավական բնութագիրը.

53) Շորթման քրեաիրավական բնութագիրը.

54) Ահաբեկչության քրեաիրավական բնութագիրը.

55) Պատանդ վերցնելու քրեաիրավական բնութագիրը.

56) Բանդիտիզմի քրեաիրավական բնութագիրը.

57) Ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու քրեաիրավական բնութագիրը.

58) Խուլիգանության քրեաիրավական բնութագիրը.

59) Դիակը կամ թաղման վայրերն անարգանքի ենթարկելը.

60) Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը.

61) Իշխանությունը յուրացնելու քրեաիրավական բնութագիրը.

62) Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու քրեաիրավական բնութագիրը.

63) Պաշտոնեական լիազորություններն անցնելու քրեաիրավական բնութագիրը.

64) Խոշտանգման քրեաիրավական բնութագիրը.

65) Կաշառք ստանալու և տալու, կաշառքի միջնորդության քրեաիրավական բնութագրերը.

66) Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը.

67) Ինքնիրավչությունը.

68) Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելու քրեաիրավական բնութագիրը.

69) Սուտ մատնությունը.

70) Հանցագործությունը պարտակելը.

71) Հանցագործության մասին չհայտնելը.

72) Սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալը կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը..

Արցախի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք

- 73) «Վերջնական որոշում» և «գործն ըստ էության լուծող դատական ակտ» հասկացությունները.
- 74) «Քրեական հետապնդում» և «մեղադրանք» հասկացությունները: Քրեական հետապնդում հարուցելը և այն դադարեցնելը.
- 75) «Բնակարան» հասկացությունը...
- 76) Անձանց բացարկելը և քրեական դատավարությանը մասնակցելուց ազատելը.
- 77) Միջնորդությունների և պահանջների՝ քննության առնելու պարտադիր լինելը.
- 78) Դատավարական գործողությունների և որոշումների բողոքարկման ազատությունը.
- 79) Ապացույցների հասկացությունը, որպես ապացույց չթույլատրվող նյութերը.
- 80) Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները՝ որպես ապացույց.
- 81) Ապացուցման ենթակա հանգամանքները. որոշակի ապացույցների առկայությամբ հաստատվող հանգամանքները.
- 82) Ապացույցների տեսակները.
- 83) Ձերբակալման հասկացությունը և տեսակները.
- 84) Ձերբակալման հիմքերն ու դատավարական կարգը.
- 85) Խափանման միջոց ընտրելու հիմքերը.
- 86) Կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառման հիմքերը և դատավարական կարգը.
- 87) Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման հիմքերը և դատավարական կարգը.
- 88) Անձնական երաշխավորության և կազմակերպության երաշխավորության կիրառման հիմքերն ու դատավարական կարգը.
- 89) Հսկողությանը հանձնելը և հրամանատարության հսկողությանը հանձնելը.
- 90) Խափանման միջոցը փոփոխելու և վերացնելու հիմքերն ու դատավարական կարգը.
- 91) Դատավարական հարկադրանքի այլ միջոցների (պաշտոնավարության ժամանակավոր դադարեցում, բերման ենթարկել) կիրառման հիմքերը և դատավարական կարգը.
- 92) Քաղաքացիական հայցը քրեական դատավարությունում.
- 93) Դատական ծախսերը.
- 94) Դատավարական ժամկետները.
- 95) Քրեական գործի հարուցման առիթները և հիմքերը.
- 96) Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները.
- 97) Նախնական քննության ընդհանուր պայմանները.
- 98) Անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը և դատավարական կարգը.
- 99) Վկայի և տուժողի հարցաքննության դատավարական կարգը.
- 100) Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության դատավարական կարգը.
- 101) Ջննման, արտաշիրման և քննման դատավարական կարգը.
- 102) Առերեսման դատավարական կարգը.
- 103) Ճանաչման ներկայացնելու դատավարական կարգը.
- 104) Խուզարկության և առգրավման դատավարական կարգը.
- 105) Քննչական փորձարարության դատավարական կարգը.
- 106) Փորձաքննություն նշանակելու և կատարելու դատավարական կարգը.

- 107) Քրեական գործով վարույթի կասեցման հիմքերը և դատավարական կարգը.
- 108) Քրեական գործով վարույթի կարճման դատավարական կարգը.
- 109) Մեղադրական եզրակացության կառուցվածքը.
- 110) Դատախազի որոշումները մեղադրական եզրակացությամբ ստացված գործով.
- 111) Դատարանի որոշմամբ կատարվող քննչական գործողությունները.
- 112) Դատարանի որոշմամբ կիրառվող դատավարական հարկադրանքի միջոցները.
- 113) Դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման նկատմամբ դատական վերահսկողությունը.
- 114) Դատարանի որոշմամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները.
- 115) Օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման նկատմամբ դատական վերահսկողությունը.
- 116) Քրեական հետապնդման և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) օրինականության նկատմամբ դատական վերահսկողությունը.
- 117) Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկումը.
- 118) Քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների բողոքարկումը.
- 119) Դատական քննության ընդհանուր պայմանները.
- 120) Դատաքննություն.
- 121) Դատախազի լիազորությունները գործը կամ նյութը դատարանում քննելիս, մեղադրանքի պաշտպանությունը դատարանում.
- 122) Մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելը.
- 123) Մեղադրանքից հրաժարվելը և դրա հետևանքները.
- 124) Դատական քննության արագացված կարգի կիրառման հիմքերը և պայմանները.
- 125) Դատական վիճաբանությունների էությունը և մասնակիցները: Ամբաստանյալի վերջին խոսքը.
- 126) Դատավճռի տեսակները.
- 127) Դատավճռի կառուցվածքը և հատկանիշները.
- 128) Վերաքննիչ բողոք բերելու սուբյեկտները և դատավարական կարգը.
- 129) Վերաքննիչ բողոքարկման ենթակա դատական ակտերը և բողոքարկման ժամկետները.
- 130) Վերաքննության սահմանները.
- 131) Վերաքննիչ դատարանի լիազորությունները.
- 132) Վճռաբեկ բողոքարկման սուբյեկտները, ժամկետները և կարգը.

Քրեագիտություն

- 133) Քննչական վարկածները.
- 134) Դեպքի վայրի զննության մարտավարությունը.
- 135) Խուզարկության մարտավարությունը.
- 136) Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության մարտավարությունը.

- 137) Դիակի դատաբժշկական փորձաքննությամբ լուծվող հանգամանքները և փորձագետին առաջադրվող հարցերը.
- 138) Անձանց դատաբժշկական փորձաքննությամբ պարզվող հանգամանքները և փորձագետին առաջադրվող հարցերը.
- 139) Դատաձեռագրաբանական և դատափաստաթղթաբանական փորձաքննություններով պարզվող հանգամանքները և փորձագետին առաջադրվող հարցերը.
- 140) Հետքաբանական փորձաքննությամբ պարզվող հանգամանքները և փորձագետին առաջադրվող հարցերը.
- 141) Դատաձգաբանական փորձաքննությամբ լուծվող հարցերը.
- 142) Դատաավտոտեխնիկական փորձաքննությամբ պարզվող հանգամանքները և փորձագետին առաջադրվող հարցերը.
- 143) Մպանությունների քննության մեթոդիկան.
- 144) Գողությունների քննության մեթոդիկան.
- 145) ՃԵԿ խախտումների վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան:

Արցախի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրք

- 146) Քաղաքացիական իրավահարաբերությունների ծագման հիմքերը.
- 147) Իրավաբանական անձանց տեսակները. Իրավաբանական անձի հասկացությունը և հատկանիշները.
- 148) Հողի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները.
- 149) Ապօրինի շինարարության և ինքնակամ կառույցի հասկացությունը, կարգավիճակը.
- 150) Սեփականության իրավունքի պաշտպանության քաղաքացիաիրավական եղանակները.
- 151) Գործարքի հասկացությունը, գործարքի տեսակները և ձևը, գործարքի վավերության պայմանները.
- 152) Հայցային վաղեմություն.
- 153) Պարտավորության հասկացությունը, տեսակները և տարրերը.
- 154) Քաղաքացիաիրավական պատասխանատվության տեսակները և հիմքերը.
- 155) Վնաս պատճառելու համար պատասխանատվության հիմքերը.

Արցախի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգիրք

- 156) Կողմերի հասկացությունը, նրանց դատավարական իրավունքները և պարտականությունները.
- 157) Քաղաքացիական դատավարությանը դատախազի մասնակցության հիմքերը: Դատախազի կարգավիճակը քաղաքացիական դատավարությունում.
- 158) Ապացույցների հասկացությունը և դասակարգումը: Ապացույցների տեսակները..
- 159) Հայցային վարույթի հասկացությունը և էությունը.
- 160) Հայցի հասկացությունը: Հայցի տարրերը և հայցի հարուցման իրավունքը.

- 161) Հայցի ապահովում....
- 162) Վերաքննիչ վարույթի ընդհանուր բնութագիրը և վերաքննիչ բողոքարկման իրավունքը: Վերաքննիչ բողոք բերելու կարգը.
- 163) Վճռաբեկ վարույթը, վճռաբեկ բողոքարկման իրավունքը: Վճռաբեկ բողոք բերելու կարգը.
- 164) Վճռաբեկ բողոք բերելու հիմքերը.
- 165) Դատախազի կողմից դատական ակտերի բողոքարկումը վերաքննության և վճռաբեկության կարգով.

Արցախի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք

- 166) Գործ հարուցելու հիմքը և հայցի տեսակները.
- 168) Հայց ներկայացնելու ժամկետները և հայցադիմումին ներկայացվող պահանջները.
- 169) Վարչական դատարանի դատական ակտերը, դրանց ուժի մեջ մտնելը և բողոքարկման կարգը.
- 170) Դատախազի կողմից դատական ակտերի բողոքարկումը.
- 171) Վարչական դատարանի բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը, դրանց դեմ բողոք բերելու իրավունքը և ժամկետները.

Արցախի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրք

- 172) Դատապարտյալի հիմնական իրավունքները..
- 173) Դատապարտյալին տեսակցություններ տրամադրելու կարգն ու պայմանները.
- 174) Դատապարտյալի աշխատանքն ուղղիչ հիմնարկում՝ կարգն ու պայմանները. կարգն ու առանձնահատկությունները..
- 175) Պատժի կրման առանձնահատկություններն ըստ ուղղիչ հիմնարկի տեսակի.
- 176) Ուղղիչ հիմնարկների տեսակները, դրանց առանձնահատկություններն ու ուղղիչ հիմնարկի տեսակը փոփոխելու կարգը.
- 177) Պատժից ազատելու հիմքերը, կարգը, վերահսկողությունը պատժից ազատելու և պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերում.
- 178) Անչափահաս դատապարտյալի պատիժը կրելու առանձնահատկությունները.
- 179) Վերահսկողությունը և հսկողությունը պատիժները կատարելու նկատմամբ.
- 180) Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության առանձնահատկությունները.
- 181) Պատիժը կրելու վայր մուտքի և ելքի կարգը: